ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 փետրվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

27
(2877)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՂԵՐԸ ԾԱԽՄԵԼ ԵՆ, ԲԱՅՑ ՀԱՄԵՐԳԸ ՉԻ ԿԱՅԱՆՈՒՄ





ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեռ նախորդ տարվա ամռան սկզբին շրջանառվեցին լուրեր, ապա հաստատվեց, որ ամերիկացի հայտնի ռեփեր Մնուփ Դոգը համերգով հանդես կգա Հայաստանում: Օգոստոսին հայտնի դարձավ, որ համերգի համար պետական բյուջեից հատկացվել է 6 միլիոն դոլար՝2.3 միլիարդ դրամ: Ավելի ուշ որոշվեց, որ համերգը տեղի կունենա սեպտեմբերի 23-ին, սակայն սեպտեմբերի 9-ից 10-ը ընկած ժամանակահատվածում համերգի կազմակերպիչ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը հայտարարություն տարածեց ֆեյսբուքյան էջում. «Տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեզ է փոխանցել իր որոշումը՝ հետաձգել Snoop Dogg-ի՝ սեպտեմբերի 23-ին նախատեսված համերգը»:

Դեկտեմբերի 7-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հայտարարեց, որ համերգը տեղի է ունենալու «հավանաբար հաջորդ տարի(2024)՝ մայիս-հունիս ամիսներին»:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի թանկ կարծիքով՝ եթե համերգը տեղի ունենա, պետք է բաց լինի բոլորի համար:

Ճի՛շտ է, «եթե տեղի ունենա»:

Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ԿԳՄՍ-ից ճշտել՝ ինչ առաջընթաց կա համերգի կազմակերպման վերաբերյալ, սակայն նախարարությունից պատասխանեցին, որ հարցի հասցեատերը կառավարությունն է:

Կառավարությունն էլ իր հերթին ուղղորդեց ԿԳՄՍՆ, ապա խնդրեցին հարցում ուղարկել, իրենք կվերահասցեավորեն:

Ինչեւէ, հետաքրքիր հատվածը պատասխանն է, որում հարցին, թե ինչ գործընթացներ են եղել 2024 թվականի ընթացքում Մնուփ Դոգի համերգը կայացնելու վերաբերյալ, պատասխանել են. «Տեղեկացնում ենք, որ ԿԳՄՍ նախարարության եւ «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի միջեւ 2023 թվականի օգոստոսի 18-ին կնքվել է պայմանագիր, իսկ ս.թ. փետրվարի 19-ին՝N1 հրամանագիր, ըստ որի՝համաշխարհային աստղ Մնուպ Դոգի համերգը նախատեսվում է կազմակերպել 2024 թվականին»:

Բանն այն է՝նախարարությունը կնքել է հրամանագիր, որը, ըստ ամենայնի, ոչ մի պահանջ եւ հրաման չի ենթադրում: Ավելին՝նախարարի հայտարարությունը, թե համերգը նախատեսվում է մայիս-հունիս ամիսներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ իրական լինելու դեպքում այժմ գոնե ինչ-որ գործընթացներ կլինեին:

Նախարարի նշած ժամկետին մնացել է 2-3 ամիս, սակայն դեռ ոչ մի նոր տեղեկություն չկա:

Կառավարությանը խնդրեցինք պատասխանել նաեւ՝ վերջիվերջո ով է համերգի պատասխանատուն եւ մեր հարցերի հասցեատերը, որին ի պատասխան ստացանք հետեւյալը. ««Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի իրականացման պատասխանատու մարմինը ԿԳՄՍ նախարարությունն է՝համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի որոշման»:

Մեր հարցից հետո նախարարությունը եւս տեղեկացավ, որ պարտավորություններ ունի, սակայն մյուսների պես այն պատշաճ չի իրականացնում, իսկ Մնուփ Դոգի համերգը կարծես դարձել է կոկորդի ոսկոր, որը այդպես էլ կուլ չի գնում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ գրասենյակի տարածքում եւ ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանին պատկանող տարածքում պայթուցիկ տեղադրելու դեպքով տարբեր վարկածներ են քննվում: Իրավապահ համակարգը 3 օր է՝ ջանքեր է գործադրում դեպքը բացահայտելու համար: Ամենաուշագրավն այն է, որ իրավապահ համակարգում քննվում է վարկած, որ պայթուցիկը վերոնշյալ տարածքում, չի բացառվում, տեղադրվել է ՔՊ-ական պատգամավորներից մեկի ընտանիքի անդամի կամ բարեկամի կողմից: Այսինքն՝ տեղի ունեցածը անձնական հողի վրա եղած թեմա է: ArmLur.am-ը գրել էր, որ, մեզ հասած տեղեկությունների համաձայն, ՔՊ-ի գրասենյակից իրավապահներին զանգահարել է գրասենյակի քարտուղար Հասմիկը եւ հայտնել, որ գրասենյակի դիմաց տարօրինակ տոպրակ կա, խնդրում է իրավապահներին գալ եւ տեսնել, թե ինչ կա տոպրակի մեջ: Ավելին՝ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝իրավապահները նախնական պարզել են, որ կեղծ պայթուցիկը ՔՊ-ի գրասենյակի դիմաց տեղադրել են հենց նույնը օրը, երբ պայթուցիկ է տեղադրվել Գուրգեն Արսենյանի գրասենյակի շենքի մոտ:

Երեկ՝ ՍԴ դատավորի թեկնածու Դավիթ Բալայանի քվեարկության ժամանակ, ուշագրավ դեպք է եղել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Նիկոլ Փաշինյանի աներձագ, ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչ Հակոբյանը չի իմացել, որ ՔՊ-ն բոյկոտել է ու չպետք է մասնակցի թեկնածուի քվեարկությանը, ու գնացել է քվեարկության վայրը, սակայն նրան հետ են կանչել՝ ասելով, որ որոշում կա չմասնակցելու քվեարկությանը, ու նա լքել է քվեարկության վայրը: «Ժողովուրդ» օրաթերթը կատարվածի շուրջ անձամբ զրուցեց ՔՊ-ական պատգամավոր Հրաչ Հակոբյանի հետ, ինչին ի պատասխան՝ վերջինս հայտնեց, որ, այո, ինքը գնացել է քվեարկության, սեղանի մոտ զրուցել է կոլեգաների հետ ու հետ է գնացել: Մեր այն հարցին՝ իսկ ինչի մասին է զրուցել, Հրաչ Հակոբյանը չցանկացավ մեկնաբանել: Նշենք, որ իշխող ուժը՝ ՔՊ-ն, չմասնակցեց ՍԴ դատավորի պաշտոնում դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրված Դավիթ Բալայանի թեկնածության քվեարկությանը: Հաշվեքննիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանը հայտնել էր, որ քվեատուփում եղել է 32 քվեաթերթիկ, որի ձայները բաշխվել են հետեւյալ կերպ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ: Այսպիսով, Դ. Բալայանի թեկնածության քվեարկությանը մասնակցել է միայն խոհրդարանական ընդդիմությունը, եւ Դ. Բալայանը չի ընտրվել ՍԴ դատավոր:



ՔՊ-ական պատգամավորները առանձին հանդիպումներ են սկսել բռնի տեղահանված արցախցիների հետ: Իշխանական առանձին պատգամավորներ պարբերաբար հանդիպումներ են ունենում վարչական այս կամ այն շրջանում բնակություն հաստատած արցախցիների հետ: Մեր տեղեկություններով՝ հանդիպումները նպատակ ունեն ստուգել արցախցիների տրամադրությունը, սիրաշահել նրանց, քանի որ որեւէ մեկի համար գաղտնիք չէ արցախահայերի վերաբերմունքը իրենց հայրենիքը հանձնած փաշինյանական իշխանությունների ներկայացուցիչների նկատմամբ: Ըստ էության, այս հանդիպումներն ավելի շատ, կարելի է ասել, ցուցադրական բնույթ են կրում՝ արցախցիներին ցույց տալու, թե մտահոգ են իրենց ճակատագրով: Մինչդեռ, փաստ է, որ մինչ այսօր էլ տեղահանված արցախցիների սոցիալական խնդիրները չլուծված են մնում. տուն ու աշխատանք չունեն, փաստաթղթեր չունեն, իսկ համապատասխան կառույցները, խնդիրը լուծելու փոխարեն, իրար վրա են գցում արցախցիների դիմումները:

ԶՐՈՒՅՑ

«ԱՐԴԵՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՆ ԽՐԱՄԱՏՆԵՐ ՓՈՐՈՒՄ»

Երեւանի ավագանու որոշմամբ՝ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության 2 անդամների՝ Սոնա Աղեկյանին եւ Նարինե Հայրապետյանին զրկեցին մանդատից:

Օրակարգում նաեւ Զարուհի Փոստանջյանի հարցն էր, սակայն իշխանությունները բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեցին նրա նկատմամբ ու մանդատից չզրկեցին:

Ավագանիում կատարվող վերջին իրադարձությունների մասին ArmLur.am-ը զրուցել է Զարուհի Փոստանջյանի հետ:

-Տիկին Փոստանջյան, զրույցը սկսենք ավագանիում տեղի ունեցող վերջին իրադարձություններից: Ձեր թիմակիցներից երկուսին՝ Սոնա Աղեկյանին եւ Նարինե Հայրապետյանին, ավագանին որոշմամբ զրկեց մանդատից: Օրակարգում նաեւ Ձեր հարցն էր դրված, բայց իշխանությունները որոշակի բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեցին Ձեր նկատմամբ եւ Ձեզ չզրկեցին մանդատից, թեեւ Դուք, ի տարբերություն Սոնա Աղեկյանի եւ Նարինե Հայրապետյանի, հենց ավագանու առաջին նիստից չեք մասնակցել: Ձեզ համար հասկանալի՞ էր՝ որն է պատճառն այս վերաբերմունքի:

-Նախ ասեմ, որ իշխանությունների բարեհաճության խնդիրը չէ. Դուք տեսաք, որ նրանք առաջարկել էին, նաեւ կողմ քվեարկեցին, որպեսզի դադարի ավագանու անդամների մասնակցությունը ավագանիում: Այսինքն՝ երկու ձայն չբավարարեց, թե չէ իրենք ցանկանում էին ու մինչեւ վերջ տանում էին: Ինչո՞ւ այդպիսի խտրական մոտեցմամբ ներկայացվեց 5 մանդատի վերաբերյալ որոշում, բայց անցավ երեքը. ակնհայտ է՝ եթե ինչ-որ մի գործընթաց է տեղի ունենում, ապա այդ գործընթացը չպիտի լինի ուղղակի հայտարարություններով, թե նրանք անհարգելի բացակայել են, այլ պետք է ամեն մեկի եւ յուրաքանչյուր բացակայության վերաբերյալ տրվեր պարզաբանում, հիմնավորում եւ պատճառաբվանություն, որպեսզի հասկանալի լիներ՝ դրանք իրապես անհարգելի էին, թե հարգելի, որովհետեւ քաղաքական մարմնում ընդգրկված անդամները իրավունք ունեն նաեւ բացակայել, եւ բացակաները պետք է դիտարկվեն հարգելի, որովհետու դա քաղաքական դիրքորոշում է: Այսինքն՝ բացակայում ես ինչի՞ց՝ քվեարկելուց, չես ուզում քվեարկել. դա նույնպես ընդգծված քաղաքական մոտեցում է, ես իմ դիրքորոշումը այդպես եմ հայտնում: Դա օրենքով սահմանված իրավունք է, որից դու կարող ես օգտվել: Ակնհայտ է, որ որեւիցե մեկին պարզաբանում չի տրամադրվել, թե ինչու է այդ մարդը բացակայել, եւ երկրորդ հարցը՝ բացակայությունը եղել է հարգելի, թե ոչ հարգելի:

-Տիկին Փոստանջյան, «Հանրային ձայն»-ը ինչո՞ւ չմիացավ Ձեր դեմ քվեարկությանը:

-Ես չեմ կարող ասել, որովհետեւ ես իրենց հետ ընդհանրապես որեւիցե հարաբերություններ չունեմ, նույնիսկ ես անձնապես իրենց չեմ ճանաչում: Նրանք ինչ-որ հիմնավորումներ հավանաբար ներկայացրել են կամ ունեն:

-Տիկին Փոստանջյան, ի՞նչ եք պատրաստվում անել, հնարավո՞ր է՝ որոշում կայացնեք ու անձամբ հրաժարվեք մանդատից:

-Գիտեք, անիմաստ է հիմա խոսել նման հարցադրման վերաբերյալ, մթնոլորտը, իհարկե, անթույլատրելի է, ինքներդ եք տեսել, բայց, այնուամենայնիվ, ես երեւանցի եմ: Երեւանի Արաբկիր վարչական շրջանը հիմնադրել են իմ պապերը, եւ ես շատ եմ ցավում Երեւանի համար, եւ այս պահի դրությամբ ոչ թե Երեւանի բարեկեցիկ, գեղեցիկ եւ նպաստավոր միջավայրն է ինձ հուզում, այլեւ մեր ընդհանուր անվտանգության հարցը, որը անմիջականորեն կապված է Երեւանի անվտանգության հետ: Հիմա ես տեսնում եմ՝ Երեւանի տարածքում տեղի են ունեցել բազմապիսի, հսկայական տարածքներ ներառող ռազմական, ինժեներական աշխատանքներ, այսինքն՝ խրամատներ են փորվել: Արդեն Երեւանում են խրամատներ փորում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՆՉՊԵ՞Ս ՓՉՎԵՑ ՓՈՒՉԻԿԸ

ՄԵԾ ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻԱ՝ ՓՈՔՐ ԵՐԿՐՈՒՄ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության կառավարման խորհրդի անդամ Դավիթ Խաժակյանը փետրվարի իր էջում անդրադարձել է տարբեր հարցազրույցներում որոշ փորձագետների ոգնդումներին, թե Էրդողանը Ալիեւին զգուշացրել է Հայաստանի նկատմամբ ոտնձգություն չկիրառել:

Նա մասնավորապես գրել է. «Մեծ սպեկուլյացիա՝ փոքր երկրում: Մեկ շաբաթ շարունակ տարբեր հարցազրույցներում որոշ փորձագետներ պնդում են, թե Էրդողանը Ալիեւին զգուշացրել է Հայաստանի նկատմամբ ոտնձգություն չկիրառել: Սա կապում են Թուրքիայի ձգտումների հետ՝ հաճոյանալ Արեւմուտքին:

Եթե այս ձեւակերպումները, մասնավորապես՝ այն, որ Էրդողանը կարող է Ալիեւին նման կոչ հնչեցնել, ինձ աբսուրդային չթվային, այսքան ժամանակ չէի ծախսի հասկանալու համար, թե ինչպես փչվեց այս փուչիկը:

Փետրվարի 19-ին՝ վերընտրվելուց հետո, առաջին անգամ Ալիեւը, բնականաբար, մեկնում է Անկարա: Էրդողանի հետ համատեղ ասուլիսում նրանք հանդես են գալիս հայտարարություններով: Էրդողանը, Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումը կարեւորելով, ասում է, որ «այս գործընթացում մենք միասին ենք գործում՝ Ադրբեջանի հետ ուս ուսի տված», ապա շարունակում. «Շատ կարեւոր է, որ այս հնարավորությունների պատուհանը չփակվի: Վստահ եմ, որ Հայաստանը պետք է գնահատի այս գործընթացը՝ երկարաժամկետ ռազմավարական հեռանկարի տեսանկյունից»: Ընդ որում՝ սա խաղաղության պայմանագրի շուրջ Էրդողանի ո՛չ առաջին եւ ո՛չ էլ վերջին հայտարարությունն է, որը մշտապես համեմվում է ադրբեջանական պահանջներով: Ինչպիսի հիվանդ երեւակայություն կամ չար մտադրություն պետք է ունենալ՝ ասելու համար, թե սա Ադրբեջանին ուղղված խաղաղասիրական կոչ է...

Սա դեռ ամենը չէ. Էրդողանը բառացի շարունակում է. «Կոչ ենք անում երրորդ կողմերին կառուցողական ներդրում ունենալ գործընթացում, այլ ոչ թե թունավորել այն»: Մեր ռուսատյաց գործիչները, որ չեն կարող մեկ հանրային խոսք ասել առանց կրկնելու «ռուս-թուրքական դաշինք» արտահայտությունը, այս անգամ, չգիտես՝ ինչու, որոշել են, որ այս խոսքը ուղղված է Ռուսաստանին: Այո՛, Էրդողանը հստակ չի նշում, թե ում է ուղղված իր խոսքը: Կարելի է ենթադրել, որ այն ուղղված է Ֆրանսիային, քանի որ մինչ այդ հենց Ֆրանսիային էր Ադրբեջանը մեղադրում կողմնապահ լինելու մեջ: Ադրբեջանը ինքն է խոսել ռուսական միջնորդության մասին, Թուրքիան որեւէ այլ ֆորմատում, քան հենց ռուսականը, ներգրավված չէ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում: Ո՞ր տրամաբանությամբ այս խոսքը պետք է ուղղված լիներ Ռուսաստանին»:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿՇՆՈՐՀԵՆ «ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄԸ

Երեւանի ավագանին առաջարկում է քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանին շնորհել «Երեւանի պատվավոր քաղաքացի» կոչում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ հարցը քննարկվելու է ավագանու՝ մարտի 12-ի նիստում. թեեւ նիստի օրակարգը դեռ չի հրապարակվել քաղաքապետարանի կայքէջում, բայց մեզ ավագանու անդամները փոխանցեցին, որ հարցն ընդգրկված է առաջիկա նիստի օրակարգում:

Նշենք, որ Կամո Արեյանը քաղաքապետարանի հնաբնակներից է. դեռ 1997թ.-ից տարբեր պաշտոններ է զբաղեցրել քաղաքապետարանում:

Ուշագրավ է նաեւ, որ Կամո Արեյանը ՀՀԿ անդամ է, 2013 թվականի մայիսի 5-ին ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել է Երեւանի ավագանու անդամ եւ զբաղեցրել Երեւանի փոխքաղաքապետի պաշտոնը:

Թեեւ իշխանափոխությունից հետո շատերը պաշտոնանկ արվեցին, բայց Կամո Արեյանը շարունակում է մնալ քաղաքապետարանում. այժմ զբաղեցնում է Տիգրան Ավինյանի խորհրդականի պաշտոնը:

ԵՐԿՈՒ-ԵՐԵՔ ԱՄՍԻՑ

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը հավանական է համարում երկու-երեք ամսվա ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման եւ սահմանագծման հարցերով հանձնաժողովների աշխատանքների մեթոդաբանության նախագծի հաստատումը: Մհեր Գրիգորյանն այս մասին ասաց Ազգային ժողովում կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ժամանակ՝ պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մհեր Գրիգորյանի հարցին, թե Ադրբեջանի հետ սահմանագծման եւ սահմանազատման աշխատանքները որ փուլում են գտնվում, եւ ինչ ճանապարհային քարտեզ գոյություն ունի

«Մենք առաջին փուլում քննարկեցինք եւ հաստատեցինք աշխատակարգը, որով նկարագրեցինք մեր շփումների արդյունքների ամփոփման եւ կազմակերպման ձեւը, հաստատեցինք երկու կառավարություններով:

Այս փուլում մենք քննարկում ենք համատեղ գործունեության կանոնակարգը, որը շատ ավելի շատ մեթոդական նկարագրություն է պարունակելու, եւ երբ մենք այդ աշխատանքները ավարտին հասցնենք, մենք երկու երկրներն էլ տվյալ փաստաթղթի նախագիծը կդնեն ներպետական շրջանառության մեջ: Կախված բովանդակությունից, թե ինչ կնկարագրվի, ինչ կոնսենսուսի կգանք, ըստ այդմ՝ այդ փաստաթուղթը կշրջանառվի, ամենայն հավանականությամբ, որպես օրենսդրական նախագիծ»,- ասաց Գրիգորյանը:

Փոխվարչապետի կարծիքով՝ եթե երկու կողմերը սկզբունքային դիրքորոշումների շրջանակներում մնան, եւ իրենց նախագծման աշխատանքները բխի Ալմա-Աթայի հռչակագրից, ապա կարող են երկու-երեք ամսվա ընթացքում ունենալ կանոնակարգի նախագիծ, որը կպարունակի աշխատանքի մեթոդաբանությունը:

«Մեթոդաբանությունը հաստատելուց հետո շատ ժամանակ կպահանջի բուն գործընթացը՝ թե՛ սահմանազատման, թե՛ սահմանագծման, բայց, այնուամենայնիվ, բոլորիս հասկանալի կլինի, թե ինչով ենք զբաղված»,- եզրափակեց Գրիգորյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը փետրվարի 28-ին Բեռլինում հանդիպում է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Անալենա Բերբոքի հետ:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ ԱԳ նախարարության տարածած հաղորդագրությունից, քննարկվել են տարածաշրջանային անվտանգության հարցեր: Անդրադարձ է կատարվել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին եւ նույն օրը Բեռլինում երկու երկրների նախարարների մասնակցությամբ անցկացվող քննարկումների ընթացքին:

Արարատ Միրզոյանն իր գործընկերոջն է ներկայացրել Հայաստան-Ադրբեջան միջպետական հարաբերությունների կարգավորման առանցքային հարցերի շուրջ ՀՀ մոտեցումները, որոնք արտացոլված են նաեւ 2023թ. հոկտեմբերին Գրանադայում կայացած քառակողմ հանդիպման արդյունքներով ընդունված հայտարարության մեջ, այդ թվում՝ սահմանազատման գործընթացը 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի, իսկ տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակումն ինքնիշխանության եւ իրավազորության հարգման, փոխադարձության եւ հավասարության սկզբունքների հիման վրա իրականացնելու մասով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանն ու Իրաքը համագործակցությունը խորացնելու մեծ հնարավորություններ ունեն, որոնք պարտավոր են օգտագործել»,- Բաղդադի համալսարանում ուսանողների հետ հանդիպմանն ասաց ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը՝ պատասխանելով Հայաստանի եւ Իրաքի միջեւ տնտեսական եւ քաղաքական կապերն ակտիվացնելու հնարավորությունների վերաբերյալ հարցին:

«Մենք համագործակցության մեծ հնարավորություններ ունենք, եւ մենք պարտավոր ենք այդ հնարավորություններն օգտագործել: Խոսքս վերաբերում է ինչպես երկու երկրների պատասխանատու քաղաքական գործիչներին, այնպես էլ ժողովուրդներին: Մեր քննարկումները եւ՛ Իրաքի նախագահի, եւ՛ վարչապետի, եւ՛ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ այդ շրջանակներում են եղել»,-ընդգծեց Խաչատուրյանը:

Նախագահը հիշեցրեց, որ Հայաստանն ու Իրաքը դիվանագիտական հարաբերություններ են հաստատել 1992 թվականին, Հայաստանը դեսպանատուն ունի Բաղդադում, Իրաքը՝ Երեւանում: Նրա խոսքով՝ վերջին տարիներին երկու դեսպանատների աշխատանքները բավականին ակտիվացել են:

«Սերտ համագործակցություն կա միջազգային տարբեր հարթակներում: Մենք երբեւիցե որեւէ որոշման չենք համաձայնվել, որը կհակասի երկու երկրների շահերին: Այսինքն՝ բոլոր հիմքերը կան, որպեսզի մեր բարիդրացիական, պատմական, մշակութային, քաղաքակրթական կապերն օգտագործենք մեր այսօրվա կյանքը բարելավելու, մեր երկրների քաղաքացիների բարեկեցությունը ապահովելու համար»,- եզրափակեց ՀՀ նախագահը:

ՌԴ-ՀԱՅԱՍՏԱՆ

«ՄԵՆՔ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՀՈՒՍԱԼ»

«Ռուսաստանը հայտարարում է, որ Մոսկվան եւ Երեւանը մնում են դաշնակիցներ, եւ երկկողմ հարաբերություններում դա է կարեւորը»,- հարցին անդրադարձել է Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ փետրվարի 28-ին ամենշաբաթյա ճեղազրույցի ընթացքում՝ անդրադառնալով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությանը, որ ՌԴ-ից 2023թ. Հայաստանում իշխանությունը տապալելու կոչեր են հնչել:

«Մենք ունենք պաշտոնական հարաբերություններ, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերը քննարկելու վստահելի խողովակներ, որտեղ կետ առ կետ կարող ենք անդրադառնալ բոլոր խնդիրներին: Վստահեցնում եմ, որ ՌԴ ոչ մի պաշտոնյա ոչ միայն Հայաստանի, այլեւ որեւէ սուվերեն պետության իշխանությունների տապալմանն ուղղված որեւէ հայտարարություն չի արել: Կարծում եմ՝ պետք չէ ուշադրություն դարձնել որեւէ լրագրողի կամ լրատվամիջոցի՝ այդ առթիվ արված հիմար հայտարարությանը. լրագրողները թող ազատ զբաղվեն իրենց աշխատանքով»,- ասել է Զախարովան՝ հավելելով, որ եթե, այնուամենայնիվ, նման փաստեր կան, դրանք կարող են երկկողմ քննարկման առարկա դառնալ:

«Ռուսաստանը ելակետային է համարում այն, որ Հայաստանը հանդիսանում է ՀԱՊԿ լիարժեք անդամ՝ բոլոր պարտավորություններով ու իրավունքներով հանդերձ»,- ասել է Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ անդրադառնալով «Ֆրանս-24»-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությանը, որի համաձայն՝ Հայաստանը գործնականում, ըստ էության, սառեցրել է մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում:

Զախարովան նշել է, թե ՀԱՊԿ միջոցառումներին Երեւանի մասնակցությունը դինամիկ կերպով նվազել է, «ինչը Հայաստանի անվտանգության շահերից չի բխում»:

«Մենք կտրականապես անընդունելի ենք համարում Հայաստանի Հանրապետության կողմից ՀԱՊԿ-ին ուղղված մեղադրանքներն այն մասին, որ կառույցը չի կատարել Երեւանի հանդեպ ստանձնած պարտավորությունները 2021-22թթ.-ին տարածաշրջանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների համատեքստում: Ցանկանում ենք հիշեցնել, որ 2021թ. սեպտեմբերին հայկական կողմի խնդրանքով օպերատիվ կերպով կազմավորվել եւ գնահատող առաքելությամբ ՀՀ սահմանամերձ շրջաններ է գործուղվել ՀԱՊԿ քարտուղարության եւ միացյալ շտաբի ներկայացուցչական պատվիրակությունը: Արդյունքում որոշում էր կայացվել ՀԱՊԿ կողմից մոնիթորինգային առաքելություն ուղարկելու համար, սակայն ՀՀ իշխանությունների կողմից առաջարկը մերժվել էր: Ավելին՝ փոխարենը պաշտոնական Երեւանը նախընտրել է հրավիրել Եվրամիության դիտորդական առաքելությանը:

Ամեն դեպքում, մենք շարունակում ենք ելակետային համարել այն, որ Հայաստանը հանդիսանում է ՀԱՊԿ լիարժեք անդամ՝ բոլոր պարտավորություններով ու իրավունքներով հանդերձ: Չնայած պետք է նշենք, որ, ցավոք, ՀԱՊԿ միջոցառումներին Երեւանի մասնակցությունը դինամիկ կերպով նվազել է, ինչը Հայաստանի անվտանգության շահերից չի բխում: Մենք շարունակում ենք հուսալ, որ Երեւանում, այնուամենայնիվ, կգան այն հետեւությանը, որ առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է գործընկերների հետ վստահության մթնոլորտում հանգիստ պայմաններում քննարկումների կազմակերպումը»,- ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵԼՈՒՅԹ

«ԱՋՆԻՎ ԸՆԿԵՐ ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑ ՉԻ ԵՂԵԼ»

Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստան-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ նիստում ելույթ է ունեցել Եվրախորհրդարանի բուլղարացի պատգամավոր, Հայաստանի հարցերով զեկուցող Անդրեյ Կովաչեւը:

«Մենք միշտ աջակցել ենք Հայաստանի բարեփոխումներին՝ ուղղված տարածաշրջանում կայունության հաստատմանն ու ժողովրդավարությանը: Մենք տարածաշրջանում խաղաղության եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ թշնամության վերացման կողմնակից ենք:

Պետք է նշել Ռուսաստանի ցինիկ պահվածքը: Հայաստանը հույսը դրեց նրա հանձնառության վրա եւ խաբվեց: Տրամաբանորեն սա հանգեցրեց նրան, որ Հայաստանի վարչապետ Փաշինյանը սառեցրեց իր երկրի անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Ռուսաստանը երբեք ազնիվ ընկեր ու դաշնակից չի եղել Հայաստանի համար եւ միշտ հետեւել է իր իմպերիալիստական ծրագրերին տարածաշրջանում ու աշխարհում:

Մյուս կողմից՝ Եվրամիությունը մեծ հետաքրքրություն ունի Հարավային Կովկասում քաղաքական կայունության եւ տնտեսական բարգավաճման հարցում: Այս տեսանկյունից ԵՄ-Հայաստան հարաբերությունների խորացումը վճռորոշ է: ԵՄ-ն զարգացման ամենամեծ դոնորն է Հայաստանում, առեւտրային երկրորդ գործընկերը: ԵՄ-Հայաստան հարաբերությունները երբեք այսքան ամուր եւ բազմակողմանի չեն եղել, եւ գործընկերային համաձայնագիրը Հայաստանն օգտագործում է ներքին բարեփոխումների իրականացման համար:

Միաժամանակ Հայաստան-Ադրբեջան չկարգավորված հարաբերությունները խոչընդոտում են Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումն ու կայունությունը տարածաշրջանում:

Ես աջակցում եմ վարչապետ Փաշինյանի ջանքերին Ադրբեջանի հետ երկկողմ եւ բազմակողմ քննարկումներ անցկացնելու հարցում՝ հասնելու խաղաղության երկու հարեւանների միջեւ, հետեւելով երեք սկզբունքի՝ ուժի չկիրառում, հավասար իրավունքներ եւ ժողովուրդների ինքնորոշում:

Մենք Հայաստանի հետ պետք է խորացնենք հարաբերությունները տնտեսական, ֆինանսական, սոցիալական, անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում: Հայաստանը մենակ չէ, մենք պետք է հնարավորինս շուտ տրամադրենք վիզայի ազատականացումն այդ հանրապետությանը: Եվրամիությունը Հայաստանի եւ խիզախ հայ ժողովրդի հետ է»,- ասել է Կովաչեւը:

Բուլղարացի պատգամավորը խոսքն ավարտել է հայերեն. «Աստված պահապան Հայաստանին»:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ

Տիրան Խաչատրյանի պաշտպանական խումբը հայտարարություն է տարածել. «ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար մեղադրվող գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի գործով առաջին դոնբաց դատական նիստը նշանակվել է 2024թ. մարտի 1-ին՝ ժամը 16:15-ին, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Աբովյան նստավայրում, նախագահող դատավորն է Դիանա Ղուկեյանը:

Մեր պնդմամբ՝նույնիսկ թերի եւ օրենքի բազմաթիվ խախտումներով իրականացված քրեական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները համակցությամբ ամբողջովին հերքում են Տիրան Խաչատրյանին առաջադրված «զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարած լինելու» մեղադրանքը, ինչը կհաստատվի նաեւ հրապարակային դատավարության ընթացքում: Ավելին՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնականում վկայակոչվող միակ «ապացույցը», որը ձեռք էր բերվել օրենքի խախտմամբ եւ հարցաքննվող անձի տված ցուցմունքների աղավաղմամբ, հերքվել է պաշտպանական կողմի միջնորդության հիման վրա իրականացված առերես հարցաքննության արդյունքում:

Ինչ վերաբերում է մինչ օրս Տիրան Խաչատրյանի՝ կալանքի տակ գտնվելու հանգամանքին, ապա նշենք, որ առաջին դատական նիստում քննարկվելու է Տիրան Խաչատրյանի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու կամ այն վերացնելու, ինչպես նաեւ փոփոխելու հարցը, որի շրջանակներում պաշտպանական կողմը միջնորդելու է Տիրան Խաչատրյանին ազատել կալանքից եւ կիրառել այլընտրանքային խափանման միջոց: Կարծում ենք, որ ի սկզբանե բացակայում էին Տիրան Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերը, բայց մանավանդ այս փուլում այդպիսի անհրաժեշտության մասին խոսելը զուրկ կլինի որեւէ տրամաբանությունից, քանի որ քրեական վարույթի ընթացքում, վարույթային գործողությունների ավարտով պայմանավորված, վերացել է վարույթն իրականացնող մարմնի կողմից վկայակոչվող «վարույթի մասնակիցների նկատմամբ ճնշում գործադրելու» առանց այդ էլ գոյություն չունեցած հավանականությունը: Տիրան Խաչատրանի նկատմամբ վարույթին խոչընդոտելու հիմքով կիրառված կալանքն ունեցել է բացառապես պատժիչ բնույթ՝ պայմանավորված Տիրան Խաչատրյանի անձով եւ նրա հրապարակային գործունեությամբ: Երբ այս ամենին գումարվում է այն հանգամանքը, որ միջադեպի մասնակից մնացած անձանցից որեւէ մեկը ներկայումս կալանքի տակ չէ, էլ ավելի ակնառու է դառնում Տիրան Խաչատրյանի նկատմամբ ցուցաբերվող խտրական մոտեցումը:

Հուսով ենք, որ թե՛ Տիրան Խաչատրյանի խափանման միջոցի եւ թե՛ գործի ըստ էության քննությունները կիրականացվեն օբյեկտիվության, բազմակողմանիության եւ լրիվության պահանջների պահպանմամբ:

Հիշեցնենք՝ գեներալ-լեյտենենանտ Տիրան Վազգենի Խաչատրյանը բարձրագույն ռազմական կրթությամբ զինվորական է, Հայոց բանակում ծառայել է 1991-ից մինչեւ 2021 թվականը՝ զբաղեցնելով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում եւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բարձր պաշտոններ: Ռազմական գործում գրանցած նշանակալի հաջողությունների եւ անբասիր ծառայության համար պարգեւատրվել է բարձրագույն՝ Հայրենիքի շքանշանով, Մարտական խաչ երկրորդ աստիճանի, ինչպես նաեւ ՀՀ եւ ԱՀ Մարտական ծառայության բազմաթիվ մեդալներով»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Անահիտ Վարդապետյանի գլխավորությամբ փետրվարի 28-ին ամփոփվել են Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության 2023 թվականի աշխատանքները:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի դատախազ Արամ Արամյանի տեղեկացմամբ՝ 2023 թվականի ընթացքում գրանցվել է հանցագործությունների 4313 դեպք (2022 թվականին՝ 4955 դեպք): 2023 թվականի ընթացքում արձանագրվել է ծանր հանցագործությունների 587 դեպք՝2022 թվականի 741 դեպքի դիմաց: Բացահայտման ցուցանիշը 2023 թվականին կազմել է 30.6%՝ 2022 թվականի 20.6%-ի դիմաց: Իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերն աճել են 39,6 %-ով. արձանագրվել է 187 դեպք՝ 2022 թվականի 134 դեպքի դիմաց:

2023 թվականի ընթացքում արձանագրված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի թիվը, 2022 թվականի համեմատ, նվազել է 385-ով. 2023 թվականին արձանագրվել է 1700 դեպք:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի դատախազության կողմից 2023 թվականին մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 566 քրեական վարույթ՝ 635 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 375 քրեական գործ (վարույթ)):

Արամ Արամյանի խոսքով՝ 2023 թվականին պետական (համայնքային) շահերի պաշտպանության ոլորտում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների ընթացքում տվյալներ են ստացվել այն մասին, որ բարձրաստիճան պետական պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորությունների չարաշահման արդյունքում Երեւան քաղաքի Պուշկինի 2, Կողբացու 50ա, Մոսկովյան փողոցի 29/4, Աբովյան 8 եւ Աբովյան 10 հասցեներում գտնվող շենքերի եւ շինությունների օտարումն իրականացվել է օրենսդրության կոպիտ խախտումներով, իսկ հետագայում իրավասու պետական պաշտոնատար անձանց կողմից որեւէ միջոց չի ձեռնարկվել առանձնապես խոշոր արժեք ունեցող վերոնշյալ գույքերը պետությանը վերադարձնելու ուղղությամբ:

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում վարչական շրջանների դատախազության կողմից Հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացվել հանցագործության մասին 5 հաղորդում. նախաձեռնվել է 5 քրեական վարույթ: Ոչ իրավաչափ եղանակով օտարված վերոնշյալ անշարժ գույքերը պետությանը եւ համայնքին վերադարձնելու նպատակով Վարչական դատարան է ներկայացվել 2 դիմում եւ 3 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

Ավարտվել է 2023թ. դեկտեմբերի 19-ին Գեղարքունիքի մարզում մի խումբ անձանց կողմից կատարված կողոպուտի, խուլիգանության, ինչպես նաեւ պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը բռնությամբ միջամտելու դեպքի նախաքննությունը՝ եւս 5 մեղադրյալի մասով:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության իրականացված քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ Նորատուս գյուղի հիշալ 5 բնակիչները, իրենց եւ հարակից բնակավայրերի տասնյակ այլ ձկորսների հետ, տեղեկանալով ««Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ջրային պարեկների՝ դեկտեմբերի 19-ին՝ Սեւանա լիճ նախատեսված շրջայցի եւ այդ ընթացքում իրենց կողմից լճում ապօրինի տեղադրված ձկնորսական ցանցերի հնարավոր դուրսբերման մասին, նպատակադրվել են միջամտել վերջիններիս օրինական ծառայողական գործունեությանը:

Ձկնորսները մոտորանավակներով, դիմակավորված մոտեցել են հիշյալ պաշտոնատար անձանց, շրջապատել նրանց նավակները՝ միաժամանակ պահանջելով լճից դուրս չբերել իրենց ձկորսական ցանցերն ու այլ պարագաները:

Մերժում ստանալով՝ դիմակավորված անձինք, այդ թվում՝ ինքնությունները պարզված՝ Գեղարքունիքի մարզի նշված 5 բնակիչները, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, նախ հայհոյանքներ են հնչեցրել շրջայց կատարող աշխատակիցների հասցեին, ապա նրանց մի մասը ջրով եւ դյուրավառ հեղուկներով լցված շշեր, փայտեր, երկաթյա առարկաներ են նետել նավի վրա գտնվող աշխատակիցների ուղղությամբ:

Հանցավոր արարքների կատարման համար ինքնությունները պարզված 5 անձանցից մեկին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 452-րդ հոդվածի 3-րդ մասով, երկրորդին՝ 297-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 452-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, մոտորանավակը հափշտակած 35-ամյա տղամարդուն՝ 253-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով, մյուս երկուսին՝ միայն 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նրանցից 4-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, մեկի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Նշված 5 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է, եւ նրանց վերաբերյալ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Խուլիգանական արարքներին մասնակցած այլ անձանց մասով նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 27-ից 28-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 130 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՎՈՒՇԻՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը փետրվարի 26-ին ընդունել է Արցախից բռնի տեղահանված եւ Տավուշի մարզում վերաբնակեցված մի շարք անձանց: Մարզպետը զրուցել է քաղաքացիների հետ, ծանոթացել կեցության պայմաններին, լսել նրանց կարիքները, իրազեկել պետության կողմից տրամադրվող աջակցության բոլոր ծրագրերի մասին եւ պատասխանել նրանց հուզող հարցերին: Մարզպետարանից հայտնում են, որ ներկայումս Տավուշի մարզում բնակվում է Արցախից բռնի տեղահանված 2727 անձ: Տավուշի մարզպետարանից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել են, որ 2024 փետրվարի 13-ի դրությամբ Տավուշի մարզում բնակություն է հաստատել Արցախից բռնի տեղահանված 786 ընտանիք՝2810 անձ,այսինքն՝ 13 օրում Տավուշից հեռացել է 83 արցախցի: Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ մարզում վերաբնակված արցախցիներից միայն 36-ն է աշխատանք գտել, արցախցիները Տավուշում սեփական բնակարան չունեն, ապրում են վարձակալությամբ կամ այլոց առանձնատներում անվճար:

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

Երեւան քաղաքում գրանցված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արտակ Երեմյանը 2023թ. հոկտեմբերի 7-ին հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ Իջեւան քաղաքում գրանցված անհատ ձեռներեց «Հենրիկ Մուսայելյանի», գումարի բռնագանձման պահանջով: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը 2023թ. նոյեմբերի 13-ին որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Հայցվորն այդ միջնորդությամբ դատարանին խնդրում էր պատասխանող կողմին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնել: Սույն քաղաքացիական հայցով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում կայանում են նախնական դատական նիստեր, հաջորդ նիստը նշանակված է մարտի 26-ին:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում հրապարակված է համայնքի բյուջեից սոցիալական օգնություն ստացած քաղաքացիների ցանկը: Դրամական օգնություն հատկացնելու մասին որոշումը հաստատել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը: Որոշման մեջ նշված են դրամական օգնություն ստացած 35 քաղաքացիների անուն-ազգանունները, բնակության հասցեները եւ ստացած գումարի չափը: Ցանկից 21-ը՝Հաղարծին գյուղի, 3-ը՝Գոշի, 2-ը՝ Թեղուտի, 2-ը՝Հովքի, 7-ը Դիլիջան քաղաքի բնակիչներ են: Աջակցության գումարների չափերը տարբեր են՝ 20 հազարից մինչեւ 100 հազար դրամ: Այդ տվյալների հրապարակումը չի՞ հակասում անձնական տվյալների պաշտպանության օրենքին, այդ հրապարակումն ինչքանո՞վ է էթիկայի առումով ճիշտ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՍ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Մարտից ուժի մեջ են մտնում ՀՀ էլեկտրոնային առողջապահական համակարգի փոփոխությունները, ըստ որոնց՝ ընդլայնվում է էլեկտրոնային դեղատոմսերով բաց թողնվող դեղերի ցանկը: Մարտի 1-ից բացառապես էլեկտրոնային դեղատոմսով բաց կթողնվեն հակաբիոտիկային, հակասնկային, հակամիկոբակտերային, հակավիրուսային դեղերը, իմունային շիճուկները, ղաստվաստանյութեր, միզոդրոստոլ պարունակող դեղեր:

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանը նշեց, որ էլեկտրոնային դեղատոմսի համակարգի ներդրումը կատարվում է փուլային տարբերակով: Ներդրման գործընթացը սկսվել է 2022 թվականի հուլիսից:

«Սկզբում էլեկտրոնային դեղատոմսով բաց են թողնվել կենտրոնական գնումներով ստացվածները: Ասեմ, որ դա մեկնարկել ենք մեկ պոլիկլինիկայի բազայի հիման վրա, որպեսզի վեր հանվեն տեխնիկական խնդիրները: Այնուհետեւ այն տարածվել է Հայաստանի ամբողջ առաջնային օղակի վրա: Երկրորդ փուլով արդեն ներդրվել է անվճար եւ արտոնյալ պայմաններով ստացված դեղերի դուրսգրման բաղադրիչը: Արդեն այս փուլում որոշ դեղեր դուրս կգրվեն միայն էլեկտրոնային եղանակով»,-ասաց Արտակ Ջումայանը:

Առողջապահության ազգային ինստիտուտի էլեկտրոնային առողջապահության ներդրման բաժնի ղեկավար Ծաղկանուշ Սարգսյանը տեղեկացրեց, որ համապատասխան գործիքակազմը ներդրված է, թվային համակարգն ամբողջությամբ պատրաստ է:

«Համակարգն աշխատելու է հետեւյալ սկզբունքով. բժիշկն էլեկտրոնային տարբերակով՝«Արմեդ» համակարգի միջոցով, դուրս է գրելու դեղը, նշելու է դեղի ազդող նյութը, անհրաժեշտ քանակը, որից հետո բուժառուն գնում է դեղատուն, որտեղ էլ քաղաքացու անունով փնտրվում է դեղատոմսը: Այսինքն՝ դեղատանը դեղատոմսը հասանելի չէ, քանի դեռ բուժառուն չի դիմել իրեն: Ստեղծված է համապատասխան գործիքակազմ, որ դեղատան աշխատողն այդ հարթակում նշի, թե քանի դեղ է տրամադրել բուժառուին: Դա նշանակում է, որ բուժառուն պարտավորված չէ հենց սկզբից մի անգամից ամբողջ նշանակած դեղը գնել: Բուժառուն շարունակելու է ունենալ դեղերը մասմաս գնելու հնարավորություն: Դեղատոմսն ամբողջությամբ փակված կհամարվի այն ժամանակ, մինչեւ բուժառուն դեղատոմսով նշված բոլոր դեղերը կգնի»,-ասաց Ծաղկանուշ Սարգսյանը:

Պարտադիր պայման է, որ բուժառուն դեղատուն ներկայանա անձը հաստատող փաստաթղթով: Եթե ամեն դեպքում, ինչ-ինչ հարցերով պայմանավորված, բուժառուն չի կարող մոտենալ դեղատուն, ապա բժիշկը կարող է լիազորված անձի տվյալները եւս մուտքագրել համակարգ, որից հետո վերջինս անձը հաստատող փաստաթղթով կարող է արդեն դեղատնից գնել դեղը: Էլեկտրոնային դեղատոմսը սպասարկելու համար դեղատան բոլոր աշխատողները պետք է գրանցված լինեն «Արմեդ» համակարգում: Հարցերի դեպքում կարող են զանգահարել «Արմեդ»-ի զանգերի կենտրոն, որն աշխատում է 24 ժամ, կամ կարող են զանգահարել Առողջապահության նախարարություն՝ համապատասխան ուղեցույցներին ծանոթանալու համար: Պատասխանատուները տեղեկացրին, որ դեղատները որեւէ գումար չեն ծախսելու: Ընդամենն անհրաժեշտ է համակարգիչ եւ ինտերնետ, որեւէ այլ ներդրում դեղատան կողմից չի պահանջվում:

Էլեկտրոնային դեղատոմսի համակարգի ներդրումը հնարավորություն կտա արդյունավետ վերահսկել դեղերի շրջանառության ամբողջ հետագիծը՝դեղը Հայաստան մուտք գործելու պահից մինչեւ բուժառուին հասնելը, դեղի բարդությունները, վատ ազդեցությունը եւ այլն: Դրանից բացի, բուժառուների բժիշկների համար կհեշտացվի գործընթացը, կկրճատվի թղթային շրջանառությունը, ինչպես նաեւ ժամանակը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ՊԱՐԳԵՎ՝ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Կառավարությունն առաջարկում է օրենսդրական ամրագրում տալ «կենսաբանական մահ» հասկացությանը, ինչպես նաեւ սահմանել օրենսդրական հիմք՝ լիազոր մարմնի կողմից մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստն արձանագրելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների ցանկը հաստատելու համար. Ազգային ժողովում այս մասին ասաց ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանը՝ ներկայացնելով ««Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Փոխնախարարի խոսքով՝ ներկայումս գործող «Մարդուն օրգաններ եւ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքն ընդունվել է դեռեւս 2002 թվականին: Օրենքի ընդունումից հետո առողջապահության ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերը ենթարկվել են բազմաթիվ էական փոփոխությունների, ուստի օրենքի եւ այլ ոլորտային օրենքների միջեւ համապատասխանությունն ապահովելու եւ փոխպատվաստման ոլորտում գործնականում առաջացած մի շարք խնդիրներ կարգավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել սույն նախագծի մշակումը:

«Նախագծով կատարվող փոփոխության շրջանակներում օրենքում օգտագործվող հասկացություններում, ուղեղի մահից բացի, սահմանվում է նաեւ կենսաբանական մահվան հասկացությունը, ինչն անհրաժեշտ է որոշ օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստման դեպքում:

Ներկա բժշկագիտությունը հնարավորություն է տալիս երիկամի, լյարդի եւ եղջերաթաղանթի փոխպատվաստման նպատակով դոնորություն իրականացնել կենդանի կամ հաստատված մահվան փուլում գտնվող անձից հիվանդանոցային պայմաններում: Միեւնույն ժամանակ, առավել ընդունելի եւ կիրառելի է մահացած մարդու մարմնից, դիակից եղջերաթաղանթի դոնորությունը, որն իրականացվում է դիահերձարանային պայմաններում: Ուստի, մահացած մարդու մարմնից եղջերաթաղանթի դիակային դոնորության դեպքում բժշկագիտորեն անընդունելի է ուղեղային մահվան փաստի հաստատումը, քանի որ այլեւս բացակայում են օրգանիզմի ֆիզիոլոգիական ողջ ֆունկցիաները եւ դրանց արհեստական ապահովումը դեղերի սնուցման եւ բժշկական սարքավորումների միջոցով:

Բացի օրենքով սահմանված կենդանի դոնորներից վերցվող փոխպատվաստման ենթակա օրգանների ցանկից, առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին տրվում է լիազորություն՝սահմանելու մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստը արձանագրելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների ցանկը»,-ասաց փոխնախարարը:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՁԳՁԳՎՈՒՄ Է

ԷԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆ

«Այնպես չէ, որ բոլոր դպրոցներում ժամանակին եւ որակյալ են ընթանում աշխատանքները: Կան դպրոցներ, որտեղ աշխատանքները արագացնելու խնդիր կա»,- փետրվարի 28-ին՝ կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, ասաց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Ղազարյանի հարցին, թե ինչու են Ներքին Գետաշեն համայնքում դպրոցի շինարարական աշխատանքները ձգձգվում, ինչի պատճառով երեխաների մի մասը ստիպված են 3 կմ քայլել եւ այլ դպրոց հաճախել, մյուս մասի համար էլ դասապրոցեսը մասնավոր առանձնատանն է իրականացվում՝ սահմանված չափորոշիչների էական խախտումներով:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ այս պահին հանրապետությունում տասնյակ դպրոցներ եւ մանկապարտեզներ են կառուցվում, եւ դրանց շինարարությունը տարբեր տեմպերով է ընթանում՝ կախված նրանից, թե կապալառու ընկերություններն ինչ հզորություն ունեն եւ ինչպես են կարողանում իրենց վերցրած պայմանագրերը կառավարել: Նա չիերքեց, որ դպրոցներից շատերում աշխատանքները արագացնելու խնդիր կա:

«Վերջին տարիներին պետությունը էապես ավելացրել է կապիտալ ծախսերի միջոցները, միայն այս տարվա համար ԿԳՄՍ նախարարության բյուջետային հատկացումների շրջանակներում շուրջ 120 մլրդ դրամի կապիտալ ծախսեր կան, որոնք հենց դպրոցների եւ մանկապարտեզների շինարարությանն են ուղղված: Պարզ է նաեւ, որ մենք դաշտի կարողությունների զարգացման էական խնդիր ունենք, որպեսզի այս ծավալի շինարարության տեմպերը եւ որակը լինեն բավարար: Դա շարունակական ու հետեւողական աշխատանք է»,-հավելեց ԿԳՄՍ նախարարը:

Նա հույս հայտնեց նաեւ, որ Ներքին Գետաշենի դպրոցում շուտով կկարողանան ավելի մեծ թափով աշխատանքները շարունակել, քանի որ նաեւ մոնիթորինգի մեխանիզմն են վերանայել: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ մարզպետարանների հետ միասին պարբերաբար հսկողություն է իրականացվում, եւ փորձում են հետեւել, որ ժամկետների եւ որակի խնդիր չունենան:

Արման Ղազարյանի մյուս հարցին, թե երբ են սկսվելու Ներքին Գետաշենի մանկապարտեզի շինարարության աշխատանքները, որի մրցույթը դեռեւս նախորդ տարի էր ավարտվել, նախարարը առաջարկեց գրավոր պատասխանել համայնքի հետ ժամկետները եւ աշխատանքի ընթացակարգը ճշտելուց հետո:

ԿԱՐԾԻՔ

«ՓՈՂ ՏԱՄ, ՊՐԾՆԵՄ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Արցախի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախկին նախարար Հայկ Խանումյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է, որ ՀՀ կառավարությունն առաջարկում է Արցախից բռնի տեղահանված անձանց խնդիրների երկարաժամկետ լուծման, մասնավորապես՝ բնակարանային ապահովման համար շնչին հատկացնել 3 մլն դրամի ԲԳՎ/սերտիֆիկատ (անչափահասներին անհատույց, չափահասներին՝ գումարի վերադարձի պայմանով):

«Ընդ որում՝ բնակարանների գնման վկայականները տրվելու են 5 տարվա ընթացքում: Եթե լուծումը սերտիֆիկատն էր, հարց է՝ ինչու էին 6 ամիս մտածում. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին որոշումն ընդունեին, գնային առաջ, մանավանդ որ նման փորձ ունեն: Պետք է փաստել, որ արցախցիների ու նրանց ներկայացուցիչների հետ խնդիրների լուծման քննարկումներ կառավարության կողմից չի եղել: Միայն վերջերս Տիգրան Խաչատրյանը հրավիրել էր որոշ ներկայացուցիչների՝ ասելու այն, ինչ ասաց երեկ Պ. Ղազարյանի հետ հարցազրույցի ժամանակ: Կառավարությունը հաշվի չի առել ո՛չ միջազգային խորհրդատվական կազմակերպության ներկայացրած առաջարկները, ո՛չ արցախյան որոշ շրջանակների կողմից ներկայացված առաջարկները:

Ես հարցին նայում եմ Հայաստանի ժողովրդագրական խնդիրների լուծման տեսանկյունից եւ գտնում եմ, որ արցախցիների մեծ մասի բնակարանային խնդիրների լուծումը պետք է տրվեր ՀՀ թերբնակեցված մարզերում նոր բնակֆոնդի կառուցման ու ընտանեկան տնտեսությունների ստեղծման ճանապարհով՝ զարգացման նոր խթան հաղորդելով այդ մարզերին եւ վստահություն ներշնչելով տեղում բնակվող մարդկանց: Սակայն կառավարության «փող տամ, պրծնեմ» քաղաքականությունը բերելու է հակառակ արդյունքների. խնդիր ունեցող մարզերից դեպի Երեւան եւ երեւանամերձ մարզեր արտագաղթ է սկսվելու:

Կառավարությունում բացակայում է նախաձեռնողականությունը, օպերատիվությունը, ռազմավարական մտածելակերպը: Եվ սա մի՛ նայեք արցախցիների բնակարանային խնդրի լուծման տեսանկյունից, սա նայե՛ք ՀՀ ժողովրդագրական խնդրի լուծման, տարածքային համաչափ զարգացման, անվտանգության տեսանկյունից:

Առանց լուրջ բնակարանաշինության, անիմաստ թանկանալու է մարզերում գտնվող երկրորդային շուկայի տները: Ինչպես Արցախի վերաբնակիչների սերտիֆիկատների պարագայում գյուղական տները 3-4 միլիոնից արհեստականորեն բարձրացան 10 միլիոնի, հիմա էլ թանկացման նոր ալիք է սկսելու: Սա նաեւ հնարավորություն է տալու հայաստանյան մարզերի ընտանիքներին հնարավորինս բարձր գնով վաճառել իրենց տները, տեղափոխվել Երեւան կամ արտագաղթել Հայաստանից: Մեծ հաշվով, լավագույն դեպքում մենք ունենալու ենք տեղաբնիկ բնակչության փոխարինում բռնի տեղահանվածներով՝ փոխանակ այդ մարզերում բնակչության թիվն ավելացնենք:

Բյուրոկրատական սնոբությունը հաղթահարել չկարողացող, ընթացակարգերի մեջ խճճված կառավարությունն այլ արդյունքներ չի էլ կարող ակնկալել: Վկան՝ Շուռնուխում կառուցվող 13 առանձնատները, որոնք կառուցվում են 3 տարուց ավելի:

Կարճ ասած՝ կառավարությունը ձախողել է ոչ միայն պաշտպանության ու անվտանգության հարցերը, այլ նաեւ ժողովրդագրության, մարզերում կյանքը քիչ թե շատ հրապուրիչ դարձնելու քաղաքականությունը: Գյուղամիջյան կամ միջգյուղական ճանապարհների ասֆալտապատումը հաշիվ չեն, մինչեւ Արցախի կորուստը Արցախում 4-5 գյուղ էր մնացել, որ ասֆալտ չուներ, նույնիսկ 10-15 աշակերտ ունեցող գյուղերն էլ էին ասֆալտապատ»,-գրել է նա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԵՐ

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՄՈՏ

Ծիծեռնակաբերդի բարձունքում նշվեց ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված հայկական ջարդերի զոհերի հիշատակի եւ բռնագաղթված հայ կերդված հայկական ջարդերի զոհերի հիշատակի եւ բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օրը: Սումգայիթի, Կիրովաբադի եւ Բաքվի հայկական ջարդերի զոհերին նվիրված խաչքարերի մոտ ծաղիկներ խոնարհվեցին:

«Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միության նախագահ, ԱԺ պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը նշեց, որ Սումգայիթի հայկական ջարդերով փաստացի սկսվեց հայ-ադրբեջանական հակամարտության արյունալի էջը, որը տեւում է շուրջ 35 տարի:

«Մենք հարգանքի տուրք ենք մատուցում անմեղ զոհերի հիշատակին, որպեսզի նաեւ արձանագրենք, որ այդ ջարդերից հետո ադրբեջանական իշխանությունների կողմից տարվող էթնիկ զտման քաղաքականությունը կրել է շարունակական բնույթ, եւ հենց դրա հետեւանքով 2023 թվականին ավելի քան հարյուր հազար հայեր բռնի տեղահանվեցին Լեռնային Ղարաբաղից: Այդ մարդիկ ունեն իրավունքներ, որոնք ոտնահարվել են, եւ պետք է, ի վերջո, այդ իրավունքները վերականգնվեն»,- ասաց Գաբրիելյանը:

Նրա խոսքով՝ իրավական առումով մեր հայրենակիցների իրավունքների վերականգնման եւ փոխհատուցման համար կան որոշակի դժվարություններ: Երբ նախաձեռնվում է իրավական գործընթաց, ապա ձեռքի տակ եղած տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ եւ պատշաճ: Գաբրիելյանը տեղեկացրեց, որ «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միությունը իրականացնում է բավականին ծավալուն աշխատանք, որպեսզի այն տեղեկատվությունը, որը գույքագրվել է տասնամյակներ առաջ, եւս մեկ անգամ ճշգրտվի, ինչից հետո կորոշվի, թե ինչպիսի իրավական մեխանիզմներ են օգտագործվելու հետագայում:

«Ինչ վերաբերում է դեռ այն ժամանակ բռնագանձված գույքին եւ մեր հայրենակիցների փոխհատուցմանը, որոնց տեղահանումից հետո փաստացի տեղի է ունեցել ունեցվածքի թալան, ապա պետք է ասել, որ փոխհատուցման գործընթացը բավականին երկարատեւ ու ծավալուն աշխատանք է, որն իրականացվում է, եւ հույս ունենք, որ որոշակի արդյունքներ արձանագրելու ենք: Այստեղ շատ կարեւոր է նաեւ պետության աջակցությունը, որովհետեւ մեր հայրենակիցների իրավունքների վերականգնմանն ուղղված քաղաքականությունը նախեւառաջ պետք է որդեգրի Կառավարությունը: Մենք փորձում ենք պետությանն աջակցել եւ համագործակցել Կառավարության հետ, որպեսզի քննարկումների ժամանակ գտնենք համատեղ ուղիներ առկա խնդիրների լուծման համար, եւ Հայաստանն էլ՝ որպես սուբյեկտ, իր քաղաքականության մեջ որդեգրի ու պատշաճ կերպով ադրբեջանահայերին առնչվող հարցերը ներկայացնի միջազգային կառույցներին»,- ասաց Գաբրիելյանը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՕՐԵՆՔ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ՝ ԿԱՐԳԱԲԵՐՎԱԾ

Ազգային ժողովի փետրվարի 28-ի նիստում երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվել է «Թանգարանների մասին» եւ ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Այսպիսով, առաջին անգամ անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ իր կարգավորող հիմնական մայր օրենքը:

Օրենքի ընդունմամբ կապահովվի մշակութային ժառանգության պահպանության եւ պաշտպանության համակարգված գործունեությունը, մշակույթի ոլորտում տնտեսական նոր մեխանիզմների զարգացումը, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միջեւ ծագող հարաբերությունների կարգավորումը:

Օրենսդրական փաթեթի մշակումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» կատարմամբ, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի միջոցառումների կատարման պահանջով:

«Թանգարանների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառույթները, ՀՀ թանգարանային հավաքածուի ձեւավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները, ինչպես նաեւ ՀՀ թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների եւ հավաքածուների ժամանակավոր պահպանության հանձնելու եւ արտահանման գործընթացները:

Օրենքով ամրագրվում են լիազոր պետական մարմնի լիազորությունները, թանգարանների աշխատողների իրավունքների եւ պարտականությունների, թանգարանային կրթության իրավական հիմքերը, ոչ պետական թանգարանների հավատարմագրման իրավակարգավորումները եւ համայնքային թանգարանների գործունեության սկզբունքները:

Նշենք, որ օրենքի նախագիծը մշակելու նպատակով ԿԳՄՍ նախարարության կողմից ուսումնասիրվել են թանգարանային գործում առաջադեմ համարվող մի շարք երկրների (Կանադա, ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Լատվիա, Ճապոնիա) ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, ինչպես նաեւ ԱՊՀ երկրների թանգարանային գործը կարգավորող օրենսդրությունը: Օրենքի նախագծում կիրառվել է նաեւ Թանգարանային միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄ-ի կողմից ընդունված Թանգարանների աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնագիրքը:

2023 թվականի հուլիսի 17-18-ը Եվրոպական Միության «ԹԱՅԵՔՍ» տեխնիկական օժանդակության եւ տեղեկատվության փոխանակման գործիքի շրջանակում նախագիծը քննարկվել է փորձագիտական առաքելության շրջանակում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում մարզական կոչումներ են շնորհվել մարզաշխարհի մի շարք ներկայացուցիչների: Մարզիկներին կոչումների վկայագրերը հանձնել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

Ինչպես տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, ՀՀ սպորտի վարպետի կոչմանն արժանացել են բռնցքամարտիկներ Հեղինե Պետրոսյանը, Սամվել Սիրամարգյանը, Գոռ Հովհաննիսյանը, Անդրանիկ Մարտիրոսյանը, Վաղարշակ Քեյանը, Արգիշտի Հակոբյանը, Առնո Դարչինյանը, Ալբերտ Հարությունյանը, Էրիկ Առստամյանը, Արեն Խառատյանը, Արման Միսկարյանը, Գոռ Ազիզյանը, Յուրա Բաբլումյանը, հունահռոմեական ոճի ըմբիշներ Արշակ Գեղամյանը, Պետրոս Աշկարյանը, սամբիստներ Վազգեն Մարգարյանը, Արսեն Հայրապետյանը, Միհեր Օհանյանը, սուսերամարտիկներ Անահիտ Նավասարդյանը, Կարեն Հակոբյանը, Գրիգոր Մնացականյանը, Հայկ Սահակյանը, լողորդներ Միլանյա Գունկոն, Գոռ Գրիգորյանը, Ժորա Կարապետյանը, Էրիկ Հովհաննիսյանը, թենիսիստներ Էմմա Վարդանյանը, Սյուզաննա Մուրադյանը, պաուերլիֆտինգ մարզաձեւը ներկայացնող Գոռ Հովհաննիսյանը, ինչպես նաեւ թիավարող Սիմոն Սիմոնյանը:

ՀՀ միջազգային կարգի սպորտի վարպետի կոչումը լրացրել են հունահռոմեական ոճի ըմբիշներ Յուրիկ Հովեյանը, Գասպար Տերտերյանը, բռնցքամարտիկներ Էլլադա Քոչարյանը, Ռուսլան Ասլիկյանը, սամբիստներ Նարեկ Դալլաքյանը, Բորիս Շատվերյանը, Ավետիք Պողոսյանը, Վահրամ Գրիգորյանը, Սարգիս Վարդանյանը, նետաձիգ Անդրեյ Հովհաննիսյանը եւ պարաձանրորդ Խորեն Ծատուրյանը:

Ըստ աղբյուրի՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալը շնորհավորել է մարզիկներին եւ շնորհակալություն հայտնել մեր երկրի պատիվը բարձր պահելու համար:

«Շնորհավորում եմ բոլորիդ այս բարձր կոչումները ստանալու առթիվ: Սա ձեր քրտնաջան մարզումների եւ նվիրված աշխատանքի արդյունքն է: Շատ կարեւոր գործ եք կատարում, ինչը ոգեւորում եւ հավատ է ներշնչում մարդկանց: Ձեր հաղթանակները մեր երկրի համար շատ կարեւոր են, քանի որ յուրաքանչյուր հաղթանակ օգնում է առավել ուժեղ դարձնել Հայաստանը: Մարզական հաղթանակները եւս մեկ ապացույցն են այն բանի, որ երկիրը կարող է առաջ գնալ եւ ապագա ունենալ: Կառավարությունն էլ իր հերթին անում է ամեն ինչ, որպեսզի ձեր արդյունքներն ավելի լավը դառնան, իսկ դուք ավելի գնահատված լինեք»,- ասել է Կարեն Գիլոյանը:

Նշվում է, որ նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել նաեւ մարզիչներին քրտնաջան ու անձնվեր աշխատանքի համար:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Արմավիրի մարզ, համայնք Խոյ, գյուղ Արշալույս, 21-րդ փողոց, 39 հասցեում գտնվող 328,1 ք.մ. բնակելի տուն, 10,6 քմ թոնրատուն, 2 քմ զուգարան, 21,1 քմ ծածկ, 20,5 քմ /41 խմ/ պարիսպ, 20,6 քմ ծածկ, 6,1 քմ /10,4 խմ/ պարիսպ եւ 0,17865 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 39180000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Վ. Բրյուսովի փողոց, 21 շենք, 9 հասցեում գտնվող 64,95 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 41730000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ ք., Գ. Լուսավորչի փողոց, 15 հասցեում գտնվող 288,55 ք.մ. բնակելի տուն, 5,35 քմ կաթսայատուն, 7,3 քմ թռչնանոց, 0,73 քմ /1,46 խմ/ պարիսպ եւ 0,07678 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40200000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Սեվյան 1-ին փողոց, 4 հասցեում գտնվող 149,4 ք.մ. բնակելի տուն, 85,1 քմ մառան, սանհանգույց եւ 0,0678 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18020000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 3/12 շենք, 21 հասցեում գտնվող 95,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 38900000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, քաղաք Դիլիջան, Գետափնյա փողոց, 74 շենք, 18 հասցեում գտնվող 91,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27650000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Ռոստովյան փողոց, 17 շենք, 20 հասցեում գտնվող 32,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17160000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Թալին ք., Գորկու փողոց, 29 հասցեում գտնվող 156,2 ք.մ. բնակելի տուն, 41,4 քմ ավտոտնակ, 34,3 քմ անասնաշենք եւ 0,11 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Ջ. Անդրանիկի փողոց, թիվ 18 հասցեում գտնվող 393,9 քմ բնակելի տուն, 6,9 քմ կաթսայատուն, 10,54 քմ թոնրատուն եւ 0,142 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 47200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Հարավային թաղամաս, Ռաֆֆու փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 31 հասցեում գտնվող 379,61 քմ բնակելի տուն, 41,08 քմ ավտոտնակ եւ 0,072 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 29700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 98 շենք, 36 հասցեում գտնվող 75,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15150000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Գորգագործների փողոց, 26 շենք, 16 հասցեում գտնվող 55,65 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30160000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Մուրացանի փողոց, 113/1 շենք, 48 հասցեում գտնվող 46,5 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26460000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Գ-3 թաղամաս, 5 շենք, 1 հասցեում գտնվող 71,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34470000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Ա. Խաչատրյան փողոց, 11 շենք, 44 հասցեում գտնվող 75,5 քմ բնակարան եւ27,72 քմ ինքնակամ շինություններ: Լոտի մեկնարկային գինը՝ 45580000ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Մերձավան, Արցախ թաղամաս, 1-ին փողոց, 10 հասցեում գտնվող 394,2 քմ բնակելի տուն, 19 քմ անասնաշենք եւ 0,104 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45720000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 8-րդ թաղամաս, 5 շենք, 18 հասցեում գտնվող 74,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14500000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Չարենցի փողոց, 179 շենք, 11 հասցեում գտնվող 36.8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Հ. Շիրազի փողոց, 38 շենք, 71 հասցեում գտնվող 41,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20820000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Գ. Բորյան փողոց, 4 շենք, 39 հասցեում գտնվող 52,95 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24560000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Պատկանյան փողոց, 62/2 շենք, 36 հասցեում գտնվող 59,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18900000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 18.03.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 18.04.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *Մարտի 3-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա հոբելյանական համերգ՝նվիրված Արամ Ասատրյանի հիշատակին: Տոմսերի արժեքը՝2000-60000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որքան է կազմում ամենամյա նվազագույն արձակուրդի տեւողությունը: Եվ ուզում եմ իմանալ՝ վճարովի արձակուրդի դեպքում այդ ժամկետի համար աշխատավարձը երբ է վճարվում:

Հերմինե Պետրոսյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք՝

1. ամենամյա նվազագույն արձակուրդի տեւողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր,
2. ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններով աշխատողների ամենամյա արձակուրդը չի կրճատվում,
3. կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով կարող են սահմանվել ավելի երկար տեւողությամբ արձակուրդներ՝ բացառությամբ պետական եւ համայնքային բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի: (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդված)

Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց առնվազն երեք օր առաջ: (Աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդված):

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավարձը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ մինչեւ հաջորդ ամսվա 15-ը:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կազմակերպությունը գործունեություն չի իրականացնելու, շահութահարկի կանխավճարներ պետք է կատարել, թե ոչ:

Երանուհի Մանուկյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի՝ 13 հունիսի 2011 թվականի «Գործունեության դադարեցման դեպքում ռեզիդենտների կողմից շահութահարկի եռամսյակային գումարների վճարման վերաբերյալ» N 30 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ գործունեություն ժամանակավոր (առնվազն մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը) կամ անորոշ ժամկետով չիրականացնելու մասին հայտարարությունը (կամայական ձեւով կազմված) հարկային մարմին գրավոր ներկայացրած եւ այդ ժամանակահատվածում գործունեություն չիրականացրած ռեզիդենտ կազմակերպությունները հայտարարությունը հարկային մարմին ներկայացնելու եռամսյակից հետո՝ մինչեւ գործունեությունը վերսկսելու եռամսյակը ընկած ժամանակահատվածների համար շահութահարկի կանխավճարների եւ նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարվում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվետու տարում ստացած եկամուտները մինչեւ բյուջետային տարվա ավարտը պետական կամ համայնքային բյուջե ամբողջությամբ չփոխանցելու դեպքում պետական ոչ առեւտրային կազմակերպությունները հանդիսանում են շահութահարկ վճարող այդ եկամուտները ստանալու պահից մինչեւ հաշվետու տարվա վերջը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գերմանիայի Կոտբուս քաղաքում անցկացվող սպորտային մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկության երկրորդ փուլում Հայաստանի առաջատար, Տոկիոյի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Արթուր Դավթյանը նվաճեց հաղթողի կոչումը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 8 - 14	+ 1 + 5
Կոտայքի լեռներ	- 8 - 12	+ 1 + 4
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8	+ 4 + 6
Գեղարքունիք	- 8 - 13	- 1 + 2
Լոռի	- 6 - 10	+ 2 + 6
Տավուշ	- 4 - 7	+ 3 + 7
Արագածոտնի լեռներ	- 8 - 12	0 + 3
Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7	+ 3 + 7
Արարատ	- 4 - 7	+ 9 + 12
Արմավիր	- 4 - 8	+ 9 + 10
Վայոց ձորի լեռներ	- 3 - 7	- 2 + 1
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7	+ 8 + 10
Սյունիքի հովիտներ	- 4 - 7	+ 4 + 8
Սյունիքի նախալեռներ	- 9 - 13	+ 1 + 3
ԼՂՀ	- 9 - 10	+ 1 + 3
Երեւան	1 - 3	+ 5 + 7

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*